# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2022 թվականի N 457

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԹԻՎ 53-29/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՒՐԳԵՆ ԱՐԱԳԱԾԻ ՄԱԿԻՆՅԱՆԻՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Արագածի Մակինյանի 29.11.2021թ. թիվ 16851 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07072022-06-0062 և Գուրգեն Արագածի Մակինյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22062021-06-0003 վկայականները, 16.06.2021թ. հողամասի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20210616-2-5173884), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի թիվ 53-29/1 հասցեում գտնվող, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.8քմ մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 320300 (երեք հարյուր քսան հազար երեք հարյուր) դրամով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարել Գուրգեն Արագածի Մակինյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գուրգեն Արագածի Մակինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2022 թվականի N 458

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 9 ՇԵՆՔ ԹԻՎ 46 ԵՎ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 9 ՇԵՆՔ ԹԻՎ 37 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԱՀԻՏ ԿՈԼՅԱՅԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Կոլյայի Ադամյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08082013-06-0001 և 14102019-06-0025 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 9 շենք թիվ 46 և Վ.Համբարձումյան փողոց թիվ 9 շենք թիվ 37 հասցեներում գտնվող, Անահիտ Կոլյայի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող 216.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը և խանութը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 9 շենք թիվ 37 հասցեում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ խանութ:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գույքը հանել բնակարանային ֆոնդից:
4. Բնակարանի գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Վ. Համբարձումյան փողոց, 9 շենք 37,46 խանութ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2022թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2022 թվականի N 459

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐՊԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները, եկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասին 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2. 5 կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի 2022 թվականի գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2022 թվականի N 460

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԶԳԵՆ ԽՈՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վազգեն Խորենի Հարությունյանի լիազորված անձ՝ Արթուր Սարգսի Հալևորյանի դիմումը, 06.12.1996թ. տրված անհատական բնակելի տան սեփականության վկայագիրը, 20.04.2022թ. տրված թիվ 26.657 լիազորագիրը, 10.05.2022թ. թիվ 43 ապոստիլը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց թիվ 9 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 190.0քմ և կից 21.47քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1962թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 211.47քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վազգեն Խորենի Հարությունյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց թիվ 9 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 190.0քմ մակերեսով հողամասին կից 21.47քմ մակերեսով հողամասերի նկատմամբ:
2. Ճանաչել Վազգեն Խորենի Հարությունյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց թիվ 9 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 211.47քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Ն. Ստեփանյան փողոց, թիվ 9/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2022 թվականի N 461

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ԹԱՂ ԹԻՎ 28/1-3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՌՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՔՈՒԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Սերյոժայի Աքուլյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1906880 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի 20.05.2022թ. գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ ԱՏ-20052022-06-0498 տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման 05.05.2022թ. ՄՏ-05052022-06-0374 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Չուխաջյան թաղ թիվ 28/1-3 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել նոր փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Տ. Չուխաջյան թաղամաս, 28/36 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 462

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃ ԹԻՎ 28/2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Ռուբիկի Գևորգյանի լիազորված անձ Դիանա Վարդանի Չալիկյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1881035 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 20.10.2020թ. թիվ 4035 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20201020-79-4772371), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Շիրակի խճ թիվ 28/2ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Շիրակի խճուղի, 28/51 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 463

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1168 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 31 մայիսի 2021 թվականի թիվ 1168 որոշումը, 30.12.2021թ. տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ԱՏ-30122021-06-0403 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 31 մայիսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 43/1-43/10 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված մետաղական ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Արա Վիլունի Առաքելյանին օտարելու մասին» թիվ 1168 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում և 1-ին կետում «43/1-43/10» թվերը փոխարինել «43/1-19» թվերով:

2. Որոշման 1-ին կետում «18.58» թվերը փոխարինել «18.56» թվերով:

3.Որոշման նախաբանում «21042021-06-0009» թվերը փոխարինել «07072022-06-0045» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 464

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԿՈՒՂԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Ջումշուդի Գրիգորյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2022916 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 08.02.2022թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 642 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20220207-84-5682801), 08.02.2022թ. սեփականության իրավունքի թիվ 641 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20220207-105-5682832), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 12 հասցեում գտնվող նկուղին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 12 շենք, 55 նկուղ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 465

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂ ԹԻՎ 26Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Վաչիկի Հովհաննիսյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1878452 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բաթումի փող թիվ 26ա հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Բաթումիի փողոց, 26/1 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 466

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 327 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Սամվելի Պետրոսյանի 10.08.2022թ. թիվ 9168 դիմումը,Վանաձոր համայնքի ղեկավարի 02 օգոստոսի 2022 թվականի թիվ 327 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08.08.2022 թվականի թիվ Կ-08082022-06-0085 որոշումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 օգոստոսի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 63 շենք, 31 հասցեում գտնվող, Դավիթ Սամվելի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հացե տրամադրելու մասին» թիվ 327 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման 2-րդ կետի ա) ենթակետում «շինությունների» բառից հետո լրացնել «և 28.8 քմ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասից 3.78 քմ բաժնեմասի» բառերը:

2. Որոշման 2-րդ կետի բ) ենթակետում «շինությունների» բառից հետո լրացնել «և 28.8 քմ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասից 3.42քմ բաժնեմասի» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 467

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2-1 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Ռուբենի Քոչարյանի, Արմեն Ռուբենի Քոչարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05062012-06-0093 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 09.11.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5407 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20211104-84-5499473), ՀՀ կադաստրի կոմիտեի 07.12.2021թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-07122021-06-0072 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տերյան փակուղի թիվ 2-1 բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վ. Տերյան փողոց, 1-ին փակուղի, 2/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2022 թվականի N 468

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Կառլենի Միքաելյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքների պետական գրանցման թիվ 1712462 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 11.01.2022թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 49 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20211222-84-5606080), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Կ. Հալաբյան փողոց, 2/10 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 սեպտեմբերի 2022 թվականի N 469

ԱՐՏՅՈՄ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Գագիկի Գրիգորյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ***որոշում եմ***.

1. Արտյոմ Գագիկի Գրիգորյանին 2022 թվականի սեպտեմբերի 2-ից ազատել Վանաձոր համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնից:

2. Ֆինանսական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 սեպտեմբերի 2022 թվականի N 470

ՖԵԼԻՔՍ ՎԱԶԳԵՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 281 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ելնելով բողոքարկված վարչական ակտի նպատակահարմարության տեսանկյունից, քննարկեց «ԱՐՏԱՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ֆելիքս Վազգենի Մովսիսյանի կողմից 08 օգոստոսի 2022 թվականին ներկայացված թիվ 01/8913 վարչական բողոքը՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 27 հուլիսի 2022 թվականի «Ֆելիքս Վազգենի Մովսիսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակելու մասին» թիվ 281 որոշման դեմ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

29.06.2022 թվականին Գևորգ Գրիգորյանի դիմումի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 30.06.2022 թվականին կազմվել է զեկուցագիր. ըստ այդմ՝ Վարդանանց փողոց, 23/69-3 հասցեի արևմտյան մասում «ԱՐՏԱՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ֆելիքս Մովսիսյանը իրականացրել է շինարարական աշխատանքներ:

29.06.2022 թվականին Գևորգ Գրիգորյանի դիմումի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 30.06.2022 թվականին կազմված զեկուցագրի հիման վրա 2022 թվականի հուլիսի 06-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ներկայացել է Գևորգ Գրիգորյանը, իսկ Ֆելիքս Մովսիսյանը ծանուցվել, սակայն չի ներկայացել (հիմք՝ 06.07.2022թ. փոստ. անդորրագիր՝ ALO104551462AM):

Գևորգ Գրիգորյանը վարչական մարմնին խնդրել է ապահովել իր խանութի արևմտյան կողմի դռան նորմալ շահագործումը:

Վարչական վարույթի ընթացքում պարզվել է, որ 04 նոյեմբերի 2021 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից «ԱՐՏԱՆԱ» ՍՊԸ-ին է տրվել թիվ 354 շինարարության թույլտվությունը, Վարդանանց

փողոց թիվ 23 հասցեում ցուցափեղկային բացվածք իրականացնելու նպատակով, որի հիման վրա, «ԱՐՏԱՆԱ» ՍՊԸ-ի տնօրենի՝ Ֆելիքս Մովսիսյանի կողմից իրականացվել են շինարարական աշխատանքներ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.07.2022թ. կատարված տեղազննության արդյունքում պարզվել է, որ ք. Վանաձոր Վարդանանց փող թիվ 23 հասցեում իրականացված շինարարական աշխատանքները կատարվել են Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 04.11.2022թ. տրված թիվ 354 շինարարության թույլտվությանը համապատասխան, սակայն, դրա արդյունքում վերոնշյալ հասցեի արևմտյան մասում հասարակական սպասարկման օբյեկտի ՝ խանութի, արևմտյան պատի մուտքի դռան նորմալ շահագործումը խաթարվել է, ինչի համար անհրաժեշտ է նախագծային փաստաթղթերի մեջ կատարել որոշակի շտկումներ:

Արդյունքում՝ 27 հուլիսի 2022 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է «Ֆելիքս Վազգենի Մովսիսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակելու մասին» թիվ 281 որոշումը:

08 օգոստոսի 2022 թվականին «ԱՐՏԱՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ֆելիքս Վազգենի Մովսիսյանի կողմից ներկայացվել է վարչական բողոք, որում նշվել է, որ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի թիվ 596-Ն որոշման 24-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապամման թույլտվությունների փոփոխությունները կատարվում են դրանց տրամադրման համար սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան (նույն որոշման 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ կառուցապատող՝ քաղաքաշինական գործունեություն իրականացնող՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունք ունեցող անձ):

Վարչական բողոքի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի և 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

18 օգոստոսի 2022 թվականին հրավիրված վարչական վարույթի լսումների ընթացքում Ֆելիքս Մովսիսյանը հայտնել է, որ ամբողջությամբ պնդում է նախկինում իր կողմից ներկայացված վարչական բողոքը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի 19 օգոստոսի 2022 թվականին կատարված կրկնակի տեղազննության արդյունքում պարզվել է, որ Գևորգ Գրիգորյանի կողմից զողվել է Վարդանանց 23/69-3 հասցեում գտնվող հասարակական սպասարկման օբյեկտի ՝ խանութի, արևմտյան պատի մուտքի երկփեղկ դուռը՝ ստեղծելով դռան արհեստական մեծացում, որի պատճառով էլ խաթարվել է դրա նորմալ շահագործումը:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-70-րդ հոդվածներով, 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 19 մարտի 2015 թվականի թիվ 596-Ն որոշման 4-րդ հավելվածի 1-ին կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Ֆելիքս Վազգենի Մովսիսյանի վարչական բողոքը ամբողջությամբ բավարարել՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 27 հուլիսի 2022 թվականի թիվ 281 որոշումը ճանաչելով անվավեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 սեպտեմբերի 2022 թվականի N 471

## ԷԴԻԿ ՋԱՎԵՆԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդիկ Ջավենի Հունանյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Էդիկ Ջավենի Հունանյանի 2022 թվականի սեպտեմբերի 6-ից ազատել Վանաձոր համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 սեպտեմբերի 2022 թվականի N 472

## ԷԴԻԿ ԶԱՎԵՆԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդիկ Զավենի Հունանյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Էդիկ Զավենի Հունանյանին նշանակել Վանաձոր համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնում:

2. Էդիկ Զավենի Հունանյանի լիազորությունների կատարման սկիզբ սահմանել 2022 թվականի սեպտեմբերի 6-ը:

3. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 05
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 սեպտեմբերի 2022 թվականի N 473

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16-27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԷԴԳԱՐ ՀԱՅԿԻ ԷԼԻԶԲԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Հայկի Էլիզբարյանի լիազորված անձ Մեդորա Արշալույսի Վաթինյանի դիմումը, 07.07.2022 տրված թիվ 77ԱԴ0930001 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 3971 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 594-20220802-64-6136496), ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20062012-06-0187 և Էդգար Հայկի Էլիզբարյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31072013-06-0041 վկայականները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց թիվ 16-27/1 հասցեում գտնվող, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.8քմ մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 101280 (հարյուր մեկ հազար երկու հարյուր ութսուն) դրամով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարել Էդգար Հայկի Էլիզբարյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Էդգար Հայկի Էլիզբարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 22.8քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022 թվականի N 474

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15/5Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Վլադիմիրի Քոչարյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1096928 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 15/5ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 15/6 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 սեպտեմբերի 2022 թվականի N 475

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 51 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿՈԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Հովհաննեսի Պախանյանի լիազորված անձ Իզաբելլա Տիգրանի Գևորգյանի դիմումը, 02.10.2021 թվականի լիազորագիրը, 29.11.2021 թվականի թիվ 3933 ապոստիլը (նոտարական ակտի կոդ: 741-20211206-67-5566277), 07.02.2022թ. թիվ 437 (նոտարական ակտի կոդ: 741-20220121-84-5653484) և 438 (նոտարական ակտի կոդ: 741-20220121-84-5653530) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, անհատական բնակելի տան 04.06.1990թ. տեխնիկական անձնագիրը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մ. Մաշտոցի փողոց թիվ 51 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 482.24քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-1980 թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 482.24քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հակոբ Հովհաննեսի Պախանյանի սեփականության իրավունքը Վանաձոր ք. Մ. Մաշտոցի փողոց թիվ 51 բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 482.24քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք. , Մ. Մաշտոցի փողոց, 51 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022 թվականի N 476

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 58 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈԽԱԿ ՄԱՑԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ԱՐԾՐՈՒՆԻ ԱՂՎԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոխակ Մացակի Հակոբյանի և Արծրունի Աղվանի Հակոբյանի դիմումը, անհատական բնակելի տան 08.08.1986թ. տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 04.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-54/22 Ի եզրակացությունը, 10.11.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3526 (նոտարական ակտի կոդ: 741-20211105-84-5502364) վկայագիրը, 10.11.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3528 (նոտարական ակտի կոդ: 741-20211105-84-5502362) վկայագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20227EQUEX) և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 58 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ հողամասին կից 41.5քմ մակերեսով հողամասերը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-2020 թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 341.5քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սոխակ Մացակի Հակոբյանի և Արծրունի Աղվանի Հակոբյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 58 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ հողամասին կից 41.5քմ մակերեսով հողամասերի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ. բացառությամբ՝ 2020թ.-ին կառուցված 14.62քմ մակերեսով ծածկի:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա.Ավետիսյան փողոց 58/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022 թվականի N 477

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏՊԱԳՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Ալավերդու Ղազարյանի (ծնված՝ 28.02.1945թ.) դիմումը, 03.12.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6726 (նոտարական ակտի կոդ: 763-20211203-84-5563785) վկայագիրը, 18.09.1986թ. տրված տեխնիկական անձնագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.06.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022NMPGVS), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 12.08.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-105/22 Ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 583.0քմ և կից 42.29քմ մակերեսներով հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 625.29քմ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1965-1986 թթ.-ին: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սվետլանա Ալավերդու Ղազարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 583.0քմ մակերեսով հողամասին կից 42.29քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Սվետլանա Ալավերդու Ղազարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող 625.29քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Տպագրիչների փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք.Վանաձոր